«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը անգլերենի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Անգլերեն լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Բաղդասարյան

Ուսումնական հաստատություն՝ Ռ. Աբաջյանի անվան N147 հիմնական դպրոց

Երևան 2022

Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում

Բովանդակություն

Ներածություն …….3

Գլուխ 1. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ …….5

Գլուխ 2. Տեղեկատվական տեխնոլոգիաները անգլերեն լեզվի դասավանդման գործընթացում ……...……10

Եզրակացություն …….14

Օգտագործված գրականության ցանկ ……16

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Արդի ժամանակաշրջանում ահռելի դեր և նշանակություն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաները: Չկա մի ոլորտ, որտեղ կարելի է զարգացում և արդյունք ապահովել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման:

21-րդ դարում տեղեկատվական տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ. բնականաբար, անմասն չեն մնացել երեխաները, ովքեր ինքնաբերաբար դարձել են այդ <<մրցավազքի>> մասնակիցներն ու ենթարկվում են վերջինիս կանոններին: Այստեղ մեծանում է ուսուցչի դերի կարևորությունը երեխայի բազմակողմանի զարգացման հարցում: Կրթական բարեփոխումների արդյունքում ուսուցիչը ոչ միայն պետք է գիտելիք փոխանցող լինի, այլ նաև ձևավորի գիտակից քաղաքացի, ով կկարողանա դիմակայել ժամանակակից աշխարհի մարտահրավերներին:

Երրորդ հազարամյակի մարդը հազարավոր թելերով կապված է համացանցին, որից անմասն չեն մնում երեխաները: Զարգացած երկրները վաղուց են համոզվել, որ առանց նորամուծությունների կիրառման այսօր գրեթե անհնար է ապահովել հանրամատչելի և արդյունավետ կրթություն: Ուստի, այստեղ պետք է խնդիր դնել ոչ թե սահմանափակել երեխային օգտվելու տեղեկատվական տեխնոլոգիաներից, այլ երեխայի գիտակցական մակարդակը այնքան բարձրացնել, որ երեխան ինքը գիտակցի և կարողանա ընտրել իրեն անհրաժեշտ ու պիտանի ինֆորմացիան: Այս առումով պետք է հսկայածավալ աշխատանքներ տարվեն նաև ծնողների շրջանում:

Թեմայի նպատակը և խնդիրները: Այսպիսով՝ մեր աշխատանքի նպատակն է համաշխարհային փորձի ուսումնասիրության և կատարած սե - փական հետազոտական աշխատանքի միջոցով ցույց տալ տեղեկատ - վական տեխնոլոգիաների ազդեցությունը երեխայի վարքագծի, ընկալունակության, ուշադրության կենտրոնացման և զարգացման վրա, ինչպես նաև՝ տեղեկատվական տեխնոլոգիաների դերը անգլերեն լեզվի դասավանդման գործընթացում:

Աշխատանքը կատարվել է ոլորտում ի հայտ եկած խնդիրների վեր հանման միջոցով և դրանց արդիական ու օպտիմալ լուծումներ գտնելու համար:

Խնդիրներն են՝

- ուսումնասիրել՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ,
- ուսումնասիրել՝ տեղեկատվական տեխնոլոգիաները անգլերեն լեզվի դասավանդման գործընթացում:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, երկու բաժիններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխայի հոգեբանական զարգացման մեջ

Նորագույն տեխնոլոգիաները մարդկային կյանքի, ողջ հասարակության համար ստեղծել են նոր աշխարհ: Դրանք են թելադրում կյանքի ընթացքն ու ուղղորդում ճանապարհը: Ներկա դարաշրջանում, մարդ արարածը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա հասարակական կյանքը: Հիմնական բարդությունն այն է, որ մանկավարժական արդեն կատարված ուսումնասիրությունները կորցնում են արդիականությունը՝ մեդիաի արագ փոփոխման հետևանքով:

Աշխատանքային և սոցիալական միջավայրերի, դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման: Տեղեկատվական դարաշրջանում կրթական ոլորտի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվության և հաղորդակցության արդի միջոցների զարգացման և տարածման հետ[1]:

Եվ կրթությունը, որպես մշակույթի համակարգում հանդես եկող առանձնահատուկ գործունեություն, բնականաբար, չի կարող հեռու մնալ այս գործընթացից:

Մանկավարժական տեսանկյունից քննարկվում են հետևյալ խնդիրները.

- ուսուցման որակի ապահովում և կրթական բաց համակարգերի (բաց կրթության) կառուցման սկզբունքներ,
- տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները լրացուցիչ կրթության մեջ,
- նոր տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որպես ստեղծարարական կարողությունների և մասնագիտական կողմնորոշման միջոց,
- կրթության հոգեբանական, մանկավարժական խնդիրները տեղեկատվական հասարակության պայմաններում,

[1] Տե՛ս, Բալյան Ա.Ա., «Մանկավարժական հոգեբանության հարցեր», Երևան, Լույս 1983, էջ 31-33:

- տեղեկատվական հասարակության մեջ գլոբալիզացիան, կրթության ու կրթական ծառայությունների ինտեգրումը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների դաստիարակչական ազդեցությունը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը անհատի մտավոր զարգացման վրա,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխաների հոգեբանական զարգացման վրա և այլն[2]:

Այսօր ժամանակները փոխել են ամեն ինչ և իրենց կնիքն անգամ մանկության ու պատանեկության վրա են թողել:

Սրանք կյանքի կարևոր և հիանալի փուլեր են, որոնք մեզանից յուրաքանչյուրը ուրախությամբ և մեծ սիրով է հիշում: Իսկ իսկական մանկությունը լի է ազնվությամբ, մաքրությամբ, պարզությամբ, միամտությամբ, անհոգ է, ուրախ, առանց պահանջների և կամակորությունների: Եվ հենց մանուկներն ունեն աշխարհում ամենաթանկ բանը՝ մաքուր հոգի ու միտք:

Նախկին բակային և մանկական խաղերին փոխարինելու են եկել հեռուստացույցը, համակարգիչը, բջջային հեռախոսն ու պլանշետը, ինչպես նաև համացանցը:

Բոլորիս ընտանիքներում իր պատվավոր տեղն է զբաղեցնում հեռուստացույցը՝ որպես մեր կենցաղի ամենօրյա ուղեկից: Այն կլանում է թե' մեծերին, թե' փոքրերին: Հաղորդումներ, ֆիլմեր, մուլտեր, տեսահոլովակներ, գովազդ... Հեռուստացույց դիտելը դարձել է այնքան հարազատ բան, որ մենք նույնիսկ կասկածի տակ չենք դնում նրա օգտակարությունը/վնասակարությունը:

Ինչպես երթևեկության մեջ կան կանոններ, որոնց անհրաժեշտ է հետևել մեր կյանքի ապահովության և անվտանգության համար, այնպես էլ հեռուստացույց դիտելիս կան մի շարք սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է կիրառել երեխայի հոգեկան (և ոչ միայն) առողջության պահպանման համար:

Հեռուստատեսության առավելությունն այն է, որ նա «պատուհան է դեպի աշխարհ», դիտողին կապում է աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հետ, ինչ-որ իմաստով դարձնում է դրանց մասնակիցը:

---

[2] Տե'ս, Кучинский С.М., Психология внутреннего диалога. Минск 1988, էջ 81-83:

Այդ իմաստով հեռուստատեսությունը կարող է մեծ ներդրում կատարել շատ խնդիրներ լուծելու և մեր հոգևոր հորիզոնն ընդլայնելու հարցում հասնել ցանկալի արդյունքի:

Համակարգիչը և համացանցը լինելով 2Օ-րդ դարի վերջի ամենաբարդ տեխնոլոգիաներից մեկը՝ այն միաժամանակ ամենատարածվածներից է, իսկ իր ապագա ազդեցությունների հնարավորությամբ՝ ապահովաբար առաջինը:

Երբ մարդկային գործունեության գրեթե բոլոր ձևերը այս կամ այն չափով միջնորդված են համակարգչային սարքավորումներով, այն դադարում է սոսկ հզոր տեխնիկական միջոց լինելուց և դառնում ընկերային կյանքի վրա մեծապես ազդող գործոն, արմատական հասարակական փոփոխությունների զորեղ խթան:

Համակարգչի հիման վրա ուսման միջավայր ստեղծելու գաղափարը, որ հետագայում ծավալուն մշակումների առիթ տվեց, ձևավորվեց նաև շնորհիվ երեխայի իմացական զարգացման հոգեբանական տեսությունների: Սրանցից առավել հայտնիների թվում է շվեյցարացի հոգեբան Ժ. Պիաժեի մշակած տեսությունը:

Համաձայն այս տեսության՝ երեխայի զարգացումը կատարվում է չորս փուլով, որոնցից յուրաքանչյուրում նա բնորոշվում է միանգամայն տարբեր իմացական հետաքրքրություններով ու միջավայրում գործելու եղանակներով:

Երեխան պարզապես փոքրիկ մարդ չէ:

Մեծանալիս նա կտրուկ կերպարանափոխությունների է ենթարկվում: Փուլերից յուրաքանչյուրը երեխայի ուսման տարբեր կազմակերպում և տարբեր միջավայր է պահանջում: Ահա այս միջավայրերը ստեղծելու առումով է, որ համակարգիչը մեծ հնարավորություններ է խոստանում:

Մարդու միտքը միշտ ձգտում է ստեղծել ցանկացած գործունեության համար հարմար միջավայր, իսկ համակարգիչը առաջարկում է նախապես և մեծապես մշակված միջավայրեր: Վերջին տարիներին համակարգիչը դարձավ հասարակական կյանքի բոլոր ասպարեզների անբաժան մասը:

Համակարգիչների ի հայտ գալը և կայծակնային տարածումը՝ տնտեսության զարգացման տեսանկյունից, անշուշտ, դրական երևույթ է, սակայն համակարգչա - յին տեխնոլոգիաներից օգտվողների թվի աճի և համակարգչային համացանցի ընդլայնման հետ հանդիպում ենք նաև մարդու հոգեկան ոլորտի վրա համակարգչի

բացասական ազդեցության երևույթների: Գիտատեխնիկական առաջընթացը նպաստել է համակարգչային տեխնոլոգիաների զարգացմանը՝ տեղեկատվությունը դարձնելով մարդու կյանքի անբաժանելի մասը: Համացանցն այսօր ոչ միայն կապ և տեղեկատվություն է տրամադրում, այլև այնտեղ արծարծվում և բարձրացվում են սոցիալ-մշակութային բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը հաղորդում է դրանց նոր բովանդակություն[3]:

Համացանցը տեղեկատվության անփոխարինելի աղբյուր է ուսումնական և սոցիալացման տեսակետից: Համակարգիչը և բջջային հեռախոսը հնարավորություն են տալիս հաղթահարել մեկուսացումը և ձեռք բերել ընկերներ, խորհրդատվություն ստանալ մասնագետից առցանց (օնլայն) ֆորումների միջոցով, կիսվել սեփական փորձով և ստանալ օգնություն կամ խորհուրդ նմանատիպ խնդիրների հետ բախվող որևէ անձից: Համացանցը և համակարգիչը օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր են: Տարբեր կենդանիների, հեքիաթային հերոսների պատկերներն ու նկարները, երեխաներին հուզող բազմաթիվ հարցերի, ինչուների պատասխանները կարող են գտնվել համացանցում:

Երեխաների ուշադրությունը, մտածողությունը, տրամաբանությունը կարելի է զարգացնել ճիշտ ընտրված խաղերի ու առաջադրանքների շնորհիվ:

Մեդիակրթությունը և մեդիադաստիարակությունը դարձել են դարի հրամայական: Բոլոր զարգացած երկրներում առաջնային տեղ է հատկաց - վում մեդիագրագիտությանը, որը մարդկանց տալիս է ինֆորմացիայի սինթեզի, քննադատաբար գնահատման և վերլուծություն կատարելու հմտություններ:
Մեդիագրագիտությունը անհրաժեշտ է բոլորին, մասնավորապես՝ դպրոցահա - սակ երեխաներին: Եթե նախադպրոցական կամ կրտսեր դպրոցական տարիքի երեխաները ինչ-որ չափով վերահսկվում են ծնողների կողմից, ապա հիմնական և ավագ դպրոցի սովորողները առավելապես ազատ են իրենց ընտրություն - ների և որոշումներ կայացնելու հարցում, հետևապես այստեղ է անհրաժեշտ մեդիադաստիարակությունը: Մեդիագրագետ քաղաքացին ունի բարձր գիտակցված մակարդակ, իր գործողություններում ավելի վստահ է, ցանկացած իրավիճակում

[3] Տե՛ս, Антон Платов., Дети и родители Сеть. Мир компьютеров. № 3. 2004, էջ 42-44:

կարողանում է արագ կողմնորոշվել և տեղեկատվական հոսքերից քաղել այն, ինչ իրեն պետք է և օգտակար: Այս հարցում մեծ անելիքներ ունի ժամանակակից դպրոցի ուսուցիչը:

Ուսուցիչը ամենօրյա մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ իր առարկա - ներին ինտեգրելով մեդիագրագիտության տարրերը, կկարողանա դաստիարակել առողջ քննադատություն ունեցող սերունդ: Մեդիագրագետ սերունդը, հետևելով տեղեկատվական տեխնոլոգիաներից ճիշտ օգտվելու կանոներին, կարող է խուսափել մի շարք խնդիրներից:

Գլուխ 2. Տեղեկատվական տեխնոլոգիաները անգլերեն լեզվի դասավանդման գործընթացում

Վերջին տարիներին շատ ավելի հաճախ է բարձրացվում դպրոցում նոր ինֆորմացիոն տեխնալոգիաների օգտագործման հարցը: Այսինքն՝ ոչ միայն նոր տեխնիկա, այլև նոր դասավանդման ձևեր, նոր մեթոդներ, դասավանդման նոր մոտեցում:

Անգլերեն լեզվի ուսուցման գլխավոր նպատակը սովորողի հաղորդակցության մշակույթի ձևավորումն է, անգլերեն լեզվի գործնական (պրակտիկ) տիրապետումը:

Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:

Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները, ինչպիսիք են՝

- համագործակցության ուսուցումը,
- նախագծային մեթոդը,
- նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը,
- համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտա - կենտրոն մոտեցում, ապահովում են ահատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից:

Անգլերեն լեզվի դասավանդման ժամանակ ուսուցանող համակարգչային ծրագրերի աշխատանքային ձևերը ներառում են.

- Բառապաշարի ուսուցում,
- Աշխատանք արտասանության հետ,
- Երիկխոսության և մենախոսության ուսուցում,
- Գրավոր աշխատանք կատարելու ուսուցում:

Համացանցի՝ մեզ տրամադրվող ռեսուրսները հսկայական են: Անգլերեն լեզվի դասի ժամանակ համացանցի շնորհիվ լուծվում է դիդակտիկ շատ խնդիրներ.

- ընթերցանության և գրելու հմտության ձևավորում՝ օգտագործելով համացանցի նյութերը,
- սովորողի մոտ անգլերեն լեզուն սովորելու ցանկության առաջացում[4]:

Բացի այդ, աշխատանքն ուղղված է համացանց-տեխնալոգիաների հնարավորությունների ուսումնասիրությանը, որը թույլ է տալիս սովորողներին լայնացնել իրենց մտահորիզոնը, հարաբերություններ հաստատել ու ամրապնդել դրանք անգլալեզու երկրներում ապրող իրենց հասակակիցների և լեզվակիրների հետ: Սովորողները կարող են մասնակցել առցանց անցկացվող թեսթերին, վիկտորինաներին, մրցույթներին, օլիմպիադաներին, կարող են նամակագրական կապեր հաստատել ուրիշ երկրներում ապրող իրենց հասակակիցների հետ, մասնակցել առցանց հաղորդակցությանը (չաթին), վիդեոկոնֆերանսներին և այլն:

Սովորողները կարող են ինֆորմացիա ստանալ այն խնդիրների մասին, որոնք առկա են իրենց կողմից իրականացվող նախագծերում: Նախագծերը կարող են հանդես գալ նաև խմբային աշխատանքների տեսքով, որի անդամները տարբեր դպրոցներից են կամ էլ տարբեր քաղաքներից ու երկրներից:

Նոր ինֆորմացիոն տեխնալոգիաները անգլերեն լեզվի ուսուցման մեջ

Ուսուցման թվայնացումն անխտիր կապված է այն փաստի հետ, որ համակարգիչը հանդիսանում է մտավոր զարգացման աղբյուր իր բոլոր առումներով:

Ռ. Վիլյամը և Կ. Մակլին իրենց «Համակարգիչը դպրոցում» հոդվածի մեջ գրում են. «Համակարգիչն ունի մի յուրահատկություն, որն ի հայտ է գալիս այն ուրիշին որպես ուսուցանելու գործիք օգտագործելիս, և նրա «անշունչ (անհոգի)» լինելն իրեն լավ օգնական է դարձնում գիտելիքներ ձեռք բերելու հարցում:

Այս սարքը կարող է շատ «սիրալիր» կերպով շփվել օգտվողի հետ և նույնիսկ որոշ պահերի ըմբռնումով մոտենալ և երբեք չբարկանալ և ցույց չտալ, որ ձանձրույթ է զգում, օրինակ նույն արտահայտությունը բազմաթիվ անգամներ կրկնելուց»:

Այս իմաստով անհատական ուսուցման մեջ համակարգչի օգտագործումն ամենաօգտակար ձևերից մեկն է:

---

[4] Տե՛ս, Мантуленко В.В., Особенности использования электронных медиа в учебно-воспитательном процессе общеобразовательной школа, Автореф. 2007, էջ 72-74:

Անգլերեն լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին:

Առաջնային նշանակությունը տրվում է նյութն ընկալելուն, բովանդակության փոխանցմանը և իմաստի արտահայտմանը, որն էլ տանում է լեզվի քերականական կառույցների և բառերի անուղղակի ուսուցմանը: Վերջիններս սովորողը յուրացնում է անընդհատ շփման ընթացքում՝ առանց կենտրոնանալու քերականական կանոնները պարզապես անգիր անելու վրա:

Որպես ինֆորմացիոն համակարգ, համացանցն իր օգտատերերին առաջարկում է ինֆորմացիայի և պաշարների հսկայական տեսականի.

- Էլեկտրոնային փոստ (e-mail), վիդեոկոնֆերանսներ,
- Անձնական ինֆորմացիա հրապարակելու, անձնական էջ ստեղծելու և համացանցում տեղադրելու հնարավորություն,
- Մուտք ինֆորմացիոն պաշարներ,
- որոնողական համակարգեր (google, Yandex, yahoo)
- Առցանց հաղորդակցություն (Chat):

Այս բոլոր ռեսուրսները /պաշարները/ կարող են օգտագործվել դասի ընթացքում: Հաղորդակցական և միջմշակութային հաղորդակցության հմտություններ ձեռք բերելն անհնարին է առանց հաղորդակցության պրակտիկայի և համացանցի պաշարների օգտագուրծումը անգլերեն լեզվի դասի ընթացքում պարզապես դառնում է անհրաժեշտություն: Համացանցի վիրտուալ միջավայրը թույլ է տալիս դուրս գալ ժամանակի և տարածության հասկացությունների սահմաններից և կենդանի շփում է ապահովում իր օգտատերերի համար:

Լսել, ընթերցել և գրել համացանցի միջոցով

Համացանցը հիանալի միջոց է աշխարհում կատարվելիք անցու - դարձին հետևելու համար: Այն հնարավորություն է տալիս դասասենյակը վերածել նորությունների գործակալության, իսկ սովորողներին՝ առաջնակարգ լրագրողների: Գործունեության այսպիսի տեսակը շատ հարմար է ավագ դասարանների համար, քանի որ ներառում է կարդալու մեծածավալ նյութեր, ընթերցանության արվեստ և

խոսելու հմություն: Սովորողներին կարելի է առաջարկել խմբային աշխատանք, օրինակ՝ հետազոտական աշխատանք կատարել, որոնք կներառեն առօրյա կյանքի բոլոր ոլորտները. թարգմանություններ, սպորտ, եղանակ, մշակույթ և այլն:

Այս աշխատանքի առավելությունը դասարանի լիակատար մասնակցու - թյունն ու աշխատանքի ճիշտ բաշխումն է. ուժեղ սովորողներին՝ դժվար հոդված - ների հետազոտում, առավել թույլ սովորողներին՝ եղանակի տեսության, մշակույթի ներկայացուցիչների մասին հոդվածներ պատրաստում:

Համացանցը՝ հաղորդակցության միջոց

Համացանցով անգլերեն լեզվի դասավանդմանը ներկայացված նոր պահանջներից մեկն էլ հանդիսանում է համագործակցության ապահովվումը, կամ ինչպես այժմ ընդունված է անվանել՝ ինտերակտիվությունը:

Սովորեցնելով տվյալ լեզուն համացանցը նպաստում է խոսելու և արտահայտվելու հմտությունների ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, քերականություն սովորելուն՝ դարձնելով լեզվի ուսուցումն ավելի արդյունավետ (էֆֆեկտիվ):

Համացանցը զարգացնում է սովորողների սոցիալական և հոգեբանա - կան հատկանիշները, նրանց ինքնավստահությունը և կոլեկտիվում աշխատելու հմտությունները, ստեղծում է բարենպաստ պայմաններ ուսուցման համար՝ հանդիսանալով ինտերակտիվ մոտեցման գործիք[5]:

Անգլերենի իմացությունը զարգացնող կայքեր

Համացանցն անկասկած կարող է օգտագործվել որպես քերականության զարգացման, բառապաշարի հարստացման և գիտելիքների ստուգման աղբյուր: Այն ներառում է բոլոր հնարավոր բառագիտական, քերականական, ֆոնետիկական վարժություններ, թեսթեր, կարդալու նյութեր, IQ թեսթեր և այլն: Դասավանդողը կամ էլ սովորողները կարող են իրենց հարմար կայքերի ցանկ կազմել և օգտվել դասի ընթացքում, կամ էլ հանձնարարություններ կատարել այդ կայքերից օգտվելով:

[5] Տե'ս, Наталья Геннадьевна Мякинник., «Компьютер в жизни детей и подростков: польза или вред?» Абульханова Славская КА̀ - стратегия жизни, М.: 1991, էջ 19-21:

Եզրակացություն

Ժամանակակից կրթական համակարգում գնալով ավելի շատ է շեշտը դրվում տեղեկատվության հետ աշխատանքի վրա:

Ուսանողների համար ավելի կարևոր է դառնում կարողանալ ինքնուրույն ձեռք բերել լրացուցիչ նյութեր, վերլուծել ստացված տեղեկատվությունը, կարողանալ եզրակացություններ անել, կարծիք հաղորդել կարդացածի վերաբերյալ, հիմնավորել սեփական տեսակետները տիրապետելով անհրաժեշտ փաստերի՝ լուծել առաջացած խնդիրները:

Անգլերեն լեզվով տեղեկատվության հետ աշխատանքը, հատկապես, եթե հաշվի առնենք այն հնարավորությունները, որոնք մեզ է առաջարկում համացանցը, դառնում է բավականին հրատապ: Համակարգիչն արդյունավետ և հարմար օգնական է անգլերեն լեզուների ուսուցման ժամանակ, քանի որ լեզու սովորելիս ինտերակտիվ շփման առկայությունը պարտադիր պայման է:

Հատկապես վերջերս համակարգչի օգնությամբ անգլերեն լեզուների ուսուցումը լայն տարածում է գտել: Համակարգչային ուսուցումն ունի հսկայական խթանիչ՝ մոտիվացիոն ներուժ: Համակարգիչն ապահովում է ուսուցման ինտերակտիվության ավելի բարձր մակարդակ, քան աշխատանքը լսարանում կամ լեզվաբանական սենյակում:

Համակարգիչը կարող է օգտագործվել ուսուցման բոլոր փուլերում՝ նոր նյութը բացատրելու, ամրապնդելու ժամանակ, ինչպես նաև աշխատանքի վերահսկման ժամանակ: Համակարգչի միջոցով անգլերեն լեզվի ուսուցման տեխնիկական հնարավորությունները շատ լայն են: Վերջին մի քանի տարիների ընթացքում փորձեր կատարվեցին ստեղծելու ծրագրեր, որոնք հաջողությամբ կհաղթահարեին մեքենայական թարգմանությունը:

Պետք է նշել, որ այժմ գոյություն ունեն մի քանի ծրագրեր, որոնք բավական հստակ կատարում են տեխնիկական թարգմանություններ:

Սակայն գեղարվեստական տեքստերի թարգմանությունը դեռևս իր մեջ ունի բազմաթիվ դժվարություններ: Սակայն հենց նույն սկզբունքով ստեղծվել են քերականության և ուղղագրության ստուգման ծրագրեր: Ինչ վերաբերում է բանավոր

խոսքի ուսուցմանը, որը երկար ժամանակ մնում էր օտար լեզուների հա - մակարգչային ուսուցման թույլ տեղը, ապա այդ բնագավառում կտրուկ շարժ նկատվեց մուլտիմեդիայի մշակումից հետո՝ սարքավորումների մի ամբողջ շարք, որը նկատելիորեն ընդլայնում է համակարգչի հնարավորությունները:

Համակարգչային որոշ ծրագրեր նույնիսկ թույլ են տալիս օգտագործողին ձայնագրել սեփական խոսքը, իսկ այնուհետև լսել այն և համեմատել լեզվակիր - ների արտասանության հետ կամ մոնիտորի վրա տեսնել սեփական ձայնագրության դիագրաման:

Ի դեպ, ինչպես ցույց է տալիս մանկավարժների փորձը, ովքեր օգտագործում են այսպիսի համակարգչային ծրագրեր, դրանց պետք է տրվի.

1. սահմանափակ տեղ համակարգիչը չի կարող փոխարինել անհրաժեշտ մարդկային շփմանը, ինչը պահանջվում է լեզվի լիարժեք տիրապետման համար, և
2. անպայման վերահսկողություն սահմանել առաջադրանքների պարտադիր կատարման նկատմամբ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների գործածումը հնարավոր դարձրեց նաև անգլերեն լեզուների հեռավար ուսուցումը: Հեռավար ուսուցումը չի հանդիսանում ժամանակակից կրթական ոլորտի նորագույն ձեռքբերում:

Դեռ կաբելային և արբանյակային հեռուստատեսության առաջացումը ուսուցման այս ձևի կիրառման լայն հնարավորություններ ստեղծեց: Այն ներկայումս արդեն համարվում է ավանդական և լայն կիրառություն ունի: Այսպիսով, վերջին մի քանի տարիների ընթացքում համակարգչային տեխնոլոգիաների նշանակությունն առօրյա կյանքում նկատելիորեն աճել է, և դրանց հասանելիությունն այնքան է հեշտացել, որ գործնականում ամեն ոք, տանից դուրս չգալով, հնարավորություն ունի օգտվելու հսկայական տեղեկատվական ռեսուրսներից:

Ըստ այդմ՛ էլ, ժամանակին համընթաց, փոխվում են նաև դասավանդման մեթոդները՝ փորձելով սովորողներին զինել այնպիսի գիտելիքներով, որոնք ճանապարհ կհարթեն դեպի նրանց մասնագիտական առաջընթացը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալյան Ա.Ա., «Մանկավարժական հոգեբանության հարցեր», Երևան, Լույս 1983
2. Антон Платов., Дети и родители Сеть. Мир компьютеров. № 3. 2004
3. Кучинский С.М., Психология внутреннего диалога. Минск 1988
4. Мантуленко В.В., Особенности использования электронных медиа в учебно - воспитательном процессе общеобразовательной школа, Автореф. 2007
5. Наталья Геннадьевна Мякинник., «Компьютер в жизни детей и подростков: польза или вред?» Абульханова Славская КÀ - стратегия жизни, М.: 1991